ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆՈՒՄ ԱՊՐԻԼԻ 24-Ի ԿՐՕՆԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ ՈՒՂԵՐՁ

Բարձրաշնորհ Արամ Արքեպիսկոպոս Աթէշեան

Թուրքիայի Հայոց Պատրիարքական Ընդհանուր Փոխանորդ

Իմ շատ թանկագին հայազգի քաղաքացիներ,

Ձեզ ողջունում եմ սիրով եւ իմ ամենասրտանց զգացումներով:

Դուք այսօր համախմբուել էք Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքութեան յարկի տակ՝ վերյիշելու համար այն օսմանահայերը, ովքեր մահացել են Առաջին աշխարհամարտի բարդ ու դժուարին պայմաններում:

Հերթական անգամ յարգանքով եմ յիշատակում մահացած օսմանահայերը, որոնց զաւակներին ու թոռներին յայտնում եմ անկեղծ ցաւակցութիւններս:

Այս առիթով ամենակարող Աստուծմէ հայցում եմ ողորմութիւն ու թողութիւն այն միլիոնաւոր օսմանահպատակների համար, ովքեր նոյն ժամանակաշրջանում մենք կորցրեցինք համաճարակների, գաղթերի, պատերազմների ու բախումների հետեւանքով:

Մենք պատմութեան ընթացքում եղել ենք մի ազգ, որը մրցակցութիւն չէ դրել ցաւերը միմեանց հետ, խտրականութիւն չէ դրել այդ ցաւերուն միջեւ, այլ միշտ կիսել է նրանք:

Մեր տարածքների բնակիչների առընթեր, մենք միշտ փութացել ենք օգնութեան բոլոր նրանց, ովքեր յայտնուած են եղեր դժուարութիւնում՝ Անդալուզիայէն մինչեւ Աֆրիկա, Հարաւային Ասիայէն մինչեւ Եւրոպա:

Սա կատարելիս նկատի չենք ունեցել մարդու հաւատը, լեզուն, կրօնը, ազգութիւնը եւ մշակութային պատկանելութիւնը:

Այսօր էլ որպէս երկիր՝ աշխատում ենք պահպանել մեր այս ժառանգութիւնը եւ ամրապնդել եղբայրութիւնը, էմփաթիան, խաղաղութիւնը եւ անդորրութիւնը:

Թուրք ազգի խղճի եւ բարոյական կեցուածքի հրամայականն է՝ կիսել այն ցաւերը, որը մեր հայազգի քաղաքացիները կրել են պատմութիւնում:

Տա Աստուած, գալիք ժամանակաշրջանում էլ կը շարունակենք կիսել ձեր ցաւերը, լուծում գտնել ձեր նեղութիւններին ու հարցերին:

Մենք ոչ մի կերպ թոյլ չենք տայ՝ անգամ մեր մէկ քաղաքացու վանումի կամ խտրականութեան ենթարկումը՝ իր հաւատին, կրօնին կամ հակուածութեան պատճառով:

Համոզուած եմ, թէ մեր հայազգի քաղաքացիներն ալ աւելացնելով պիտի շարունակեն իրենց նպաստը՝ մեր մշակութային, սոցիալական, քաղաքական եւ առեւտրական կեանքում:

Ձեզնից խնդրում եմ՝ ինչպէս մինչեւ այսօր, այնպէս ալ ապագայում տեղի չտալ նրանց, ովքեր մեր հասարակաց անցեալը խեղաթիւրելով փորձում են պատմութենէն դուրս բերել ոխ, ատելութիւն ու թշնամանք:

Այս խոհերով կրկին յարգանքով եմ յիշատակում Առաջին աշխարհամարտում մեր կորցրած օսմանահայերը:

Իմ ողջոյններն ու յարգանքն եմ յղում իմ այն բոլոր քաղաքացիներին, ովքեր մասնակցում եմ ոգեկոչման արարողութեան:

Ռէճէպ Թայյիպ ԷՐՏՈՂԱՆ

Թուրքիայի Հանրապետութեան Նախագահ